պահանջեցին յանձնել քաղաքը։ Ենթադրւում է, որ լեհական լեգեոնները մօտ օրերս կը գրաւեն համբողջ Պոզնանը։ (Բոլշ. հաղ.)

ՖՐԱՆՍԻԱՑԻՆԵՐը ԳՐԱՒՈՒՄ ԵՆ ԳԱԼԻՑԻԱՆ ՈՒ ԼԵՀԱՍՏԱՆԸ

Կրակով հասան ֆրանսիացի ռազմիկները, որոնք յայտարարեցին, թէ Գալիցիան ու Լեհաստանը պիտի գրաւեն ֆրանսիական զօրքերի կազմից։ (Բոլշ. հաղ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՒ ՀԱՅ ՊԱՏԻՐԱԿՆԵՐԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԲԵՐԼԻՆ

Այսօր Երևան մեկնող հայկական գնացքով մեկնում են Հայաստանի կառավարութեան նոր նախարարները, Կ.-Պոլսի հայ պատուիրակութիւնը, մի քանի քաղաքական գործիչներ և Խ. Կարճիկեանի ընտանիքը։

ՕԳՆՈՒԹԻՒՆ ՈՐԲԵՐԻՆ

Հայաստանի դիւանագիտական ներկայացուցիչ Ա. Զամալեանի խնդրով ամերիկեան կոմիտէի նախագահ Բուսմանը մեկնում է Բագու՝ հայ որբերին խնամելու համար։

ՎԻԼՀԵԼՄԻ ԱՆԶԱՏՈՒԹԻՒՆը

Վիլհելմ կայսրը ստիպւեց իր թոռը յանձնել հոլլանդական գեներալ Սուազէնանին (?)։

ԳԵՐՄԱՆ ԻՇԽԱՆՆԵՐը ՀՐԱԺԱՐՈՒՄ ԵՆ

Գերմանիայում մի շարք դուքսեր և իշխաններ հրաժարւում են իշխանութիւնից։ Ամենուրեք դին. պատ. խորհուրդներն են ստանձնում իշխանութիւնը։ Հրաժարւող իշխանների զոյքերը մեծ մասամբ գրաււում են։

ՋԻՆԱԴԱԴԱՐԻ ԾՈՎԱՑԻՆ ՊԱՑՄԱՆՆԵՐը

Զինադադար կնքւեցաւ յետոյ 14 օրայ ընթացքում գերմանացիները պարտաւորւեց են գաղութիցների նաւահանգիստներում յանձնել բոլոր սուզանաւերը, 10 զրահանաւ, 6 մեծ յածանաւ, 8 թեթև յածանաւ և 50 նաւարգոյն տիպի ականանաւ։ Էլէքտրական գռչուկիցների զրանմբերը, որոնք մեծ մասամբ սերբիացիներից են բաղկացած։ (Բոլշ. հաղ.)

✓ ՄԵՐ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԻՑ

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑը

Երևան, 5 Նոյեմ.

Հայաստանի Հանրապետութեան համար ամենացաւոտ խնդիրը գաղթականութեան հարցն է։ Տաճիկների կողմից գրաււած հողամասերի ժողովուրդը անմիջապէս զրկէք թափւեց է հայաստանում և ամենադարձ օրեր է անցկացնում։ Տարածւած Հայաստանի ամբողջ սերբիտորիայի վրայ՝ այդ ժողովուրդը կազմում է պետական բիւրղէի ամենամեծ մասը, զրաղեցնում է պետական ու հասարակական գործիչների անգին մի տեղում։

Ի պատիւ Հայաստանի կառավարութեան պէտք է ասել, որ գաղթականների խնամատարութեան գործը բաւական ասելի վիճակի մէջ է գրւեր։ Համեմատութիւն իսկ չի կարող լինել Հայաստանի գաղթականների եւ այլ գաղթականների միջեւ, որոնց դրժբախտութիւն են ունեցել Վրաստանի սահմանները ընկնելու։ Գաղթականութիւնը Հայաստանում ստանում է որոշ քանակութեամբ սնունդ, կայ բժշկական հոգատարութիւն, որքերի համար բացւած են որբանոցներ, ուր հաւաքում են փողոցներից որբերը։ Հիւանդութիւններն ու մահացութիւնը համեմատաբար պակաս էին։ Եւ եթէ գաղթականութիւնն ինքն էլ ընդհանրապէս կառավարութեան ձեռք առած միջոցներին, գաղթականութեան վիճակը եթէ ոչ բաւարար, գոնէ տանելի կը լինէր։ Դժբախտաբար գաղթական ժողովրդի ղեղնոտ վիճակը հնարաւորութիւն չի տալիս տեսական կարգ ու կանոն ստեղծելու։

Գաղթականների ղեղնութիւնն ասելուցաւ, մանաւանդ, վերջերս, երբ ուր տեղաբաշխւեց, որ տաճիկները հեռանում են հայկական գաւառներից։ Այդ տարիս շատ տեղերից գաղթականները Պոզին իրենց բռնած տները և շտապով լիկիդացիայի ենթարկելով իրենց գործերը՝ շարժւեցին դէպի տահման։ Միայն Էջմիածնի շրջանում հաւաքւեց մօտ 150,000 գաղթական, որոնք Մեսրոպ բաց երկնքի տակ, անհայ ու անխնամ։

Հակառակ կառավարութեան յորդորների՝ այդ տեղահանւած ժողովուրդը հանդիպեց տաճկական սխիններին, որոնք արգելք հանդիսացան գաղթականների առաջ անցնելուն։ Եւ կարգեք երևակայել, թէ ինչպիսի ծանր, անհանդուրժելի վիճակ ստեղծեց ողորմելի գաղթականների համար,

Ի պատիւ հայաստանի կառավարութեան դիմումների՝ տաճկական ներկայացուցիչը յայտնեց, թէ տաճիկները պիտի պարպեն հայկական սերիտորիան վեց շաբաթւայ ընթացքում սկսած հոկտ. 24-ից։ Ուրիշ խօսքով դեռ ամիս ու կէս շարունակ հայ գաղթականները պէտք է շարունակէին բաց երկնքի տակ, ցրտի ու սովի զոհ։ Սա արդէն անտանելի էր և տաճիկների կողմից դիտաւորեալ մի խաղ հայաջնջումը իր վախճանին հասցնելու համար։ Մինչդեռ մի կողմից տաճիկները եւրոպական հանրային կարծիքը խաբում են՝ լուր տարածելով, թէ տաճիկ զօրքերն արդէն քաշւել են Անդրկովկասից, միւս կողմից իրենց մնում են գրաւած տեղերում և թոյլ չեն տալիս հայերին վերադառնալ իրենց տները։ Միևնոյն ժամանակ տաճիկ զինուորական իշխանութիւնը խեղաթիւրելով արտահայտում է հայաստանից ամեն ինչ—ցորեն, տաւար, ոչխար, բամբակ, բրինձ, մեքենաներ, երկաթեղէն—ամեն ինչ, որ կարելի է տեղից շարժել։ Այնքանդրեալ քաղաքն ամբողջապէս թալանւած է։ տարւած են նոյն իսկ մանսարար մարդկանց տան իրերը։ Երևանում դեպոն, որ միակ արհեստանոցն է, ուր կարելի կը լինի նորոգել հայաստանի վագոնները ու վագրաշարժները, այս բոպէիս տաճիկների կողմից տեղափոխւում է Էրզրում։ Շարաթիլեռայի շրջանից տաճիկները վերցրել են հազարից ասելի հայ սայլեր, որոնց ստիպում են բեռ տեղափոխել դէպի Ղարս ու Մարիոամիշ։ Մի հսկայական աւազակութիւն է, որ տաճիկ կառավարութիւնը գործում է այսօր հայաստանում, և հայկական կառավարութիւնն անզօր է զսում իրեն այդ չարիքի առաջն առնելու։

Գոնէ մասամբ նօսրցնելու համար այն տրամադրութիւնը, որ խտանում էր հասարակութեան մէջ տաճիկների գործած ոճրագործութիւնների ու վայրագութիւնների առթիւ, Հայաստանի Հանրդրպարանի վերջին նիստում դրւեց գաղթականների խնդիրը, որի առթիւ տեղի ունեցան բուռն վիճաբանութիւններ։ Ճառեր արտասանեցին Ս. Մամիկոնեանը, Ն. Աղբալեանը, Հ. Ազատեանը, Ա. Խանդկարեանը, Ս. Վրացեանը և ուրիշները, որոնք բոլորն էլ արծարծում էին այն միաքը, որ տաճիկ կառավարութիւնը դիտամամբ է ձգձգում հայերի վերադարձի իրաւունքը, որպէսզի հայերը կոտորւեն։ Այն քաղաքականութիւնը, որ տաճիկները վարում են գաղթականների նկատմամբ, նոյնն է, ինչ որ Բաքւի դէմ բռնած քաղաքականութիւնն է։ Այնտեղ բացայայտ կերպով, քաղաքակիրթ աշխարհի առջև դահիճները կոտորեցին 30,000 հայեր. այստեղ նոյն կոտորածը կատարւում է լռելեայն, զանազան պատրւակներով։ Այլևս այս դրութիւնը հանդուրժել կարելի չէ, և հարկաւոր է վճռական քայլերի դիմել, այլապէս Հայաստանը կը մնայ առանց հայերի։

Կառավարութեան պէտք հաղորդեց մի շարք տեղեկութիւններ, որից երևւում էր, որ արտաքին գործոց Նախարարը մէկից ասելի անգամներ դիմել է տաճկ կառավարութեան, սակայն բոլոր դիմումներն էլ չեն ասել դրական հետևանքներ։ Հանրդրպարանը յուզումնալից ճառերից յետոյ ընդունեց Դաշնակցական ֆրակցիայի բանաձևը, որով յանձնարարւում է կառավարութեան ամենաեռանդուն դիմում անել տաճկ կառավարութեան՝ պահանջելով անյապաղ մաքրել հայկական գաւառները տաճկ զօրքերից և հնարաւորութիւն տալ գաղթականներին վերադառնալ իրենց տեղերը։ Բացի այդ կառավարութեան վրայ պատասխանատուութիւն է դրւում դիմելու նաև դաշնակից պետութիւններին համապատասխան ինքզրով։ Միւս կողմից կառավարութեան յանձնարարւում է գրաւած վայրերի համար անմիջապէս վարչութիւն կազմակերպել, որպէսզի նա օգնի ժողովրդի վերադարձին և ժողովրդի հանգստանալ տաճիկներից ազատագրւած շրջանները։

Հայաստանի Հանրդրպարանի այս նիստում տիրող տրամադրութիւնը և ընդունւած բանաձևը ոմանց կողմից դիտւում է իբրև հանրապետութեան արտաքին քաղաքականութեան փոփոխութեան նշան։ Վերջին դէպքերի հետևանքով, անշուշտ, ամենքն յեղաշրջում է առաջ եկել Հայաստանի հանրային կարծիքի մէջ։ Այդ յեղաշրջման արտայայտութիւնն էր, ի հարկէ, և այն ոգին, որ իշխում էր Հանրդրպարանի վերջին նիստում, ուր և համակրական ցոյց արւեց ամերիկեան ներկայացուցչին։ Սակայն կառավարական քաղաքականութեան մասին վաղաժամ է որևէ խօսք ասել, մինչև որ նրա կողմից կարգայի դեկլարացիան, որով կորոշւի և նոր կառավարութեան արտաքին քաղաքականութիւնը։

Գաղթականների հարցը շարունակում է մնալ Հայաստանի հանրապետութեան ամենացաւոտ հարցը, որի ազդեցութեան տակ են գտնւում և բոլոր հարցերը։

Ս. Մասուրեան

ԱԳՐԲԷՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԲԱՐՔԵՐԻՑ

Գանձակ էի, Ագրբէջանի նախկին մայրաքաղաքում։ Ահա ձեզ մի երկիր, որ ամեն կերպ աշխատում է հեռու մնալ աշխարհի անցուդարձից, որպէս զի ասելի անաղարտօրէն հրապարակէ իր սեփական հանճարի իսկական սահմանները... Փասատ՝ որքան կուզէք, բայց մենք կը կամենայինք այժմ արձանագրել մի երկուսը միայն, որոնք թէ ասելի բնորոշ են այդ երկրի համար և թէ ասելի հետաքրքրական՝ մեր ժամանակների տեսակէտից։

Ռուսական լարաշուք յեղափոխութիւնից յետոյ, թուում էր թէ՝ ժողովրդական լայն զանգուածների համար անպատ՝ այսուհետև անկարելի պիտի լինի ապրել քաղաքական ազատութիւններից դուրս, քանի որ այդ ազատութիւնների ոչ միայն դադարմամբ ասան նրանք, այլև դրանց իրագործումը կեանքի մէջ՝ թէկուզ կարճ ժամանակով։ Մինչդեռ Ագրբէջանը նպատակ է դրել ասես՝ հերքել հոգեբանական այս ըստ ամենայնի օրինական ենթադրութիւնը և ապացուցել աշխարհին ու մարդկութեանը, որ ինքը ընդունակ է՝ ապրել նրա ամենագեղեցիկ յղացումների շրջանում՝ առանց որևէ մէջը նրանցից ժամանելու, առանց որևէ կապ նրանց հետ պահպանելու։ Թուում է, թէ միջնադարեան ժամանակների մի անկիւնն է կենդանացել ձեր առաջ՝ իր խնկելիզուարական կարգերով, իր բոլանդակ այլանդակութիւններով։ Չկարծէք, թէ փասա պէտք է բերենք—կոտրաններն, ջարդերի և աւերումների աշխարհից։ Տակաւին ոչ։ Դրանք երբեմնակի պոռթկումներ են, որոնք տեսում են մէկ-երկու օր ու յետոյ տեղի են տալիս—այսպէս կոչւած—նորմալ կարգերի։ Այդ նորմալ կարգերն են, որ ասելի կործանարար են։ քան ամեն մի ջարդ ու ասելի սարսափելի, քան ամեն մի եղերական դէպքերութիւն։ Տեսէք, օրինակ, թէ ինչպէս է Ագրբէջանը կատարում իր դատաստանական ֆունկցիաները ամեն օր ու ամեն գործի առթիւով։

Ամենից առաջ պիտի ասել, որ ռուսական ամեն ՀԷՋրդի դատաստանական հիմնարկութիւններն էլ փակ են ու ոչ մէկի համար էլ գոյութիւն չունեն կառավարութիւնը մինչև այժմ դատաստանական որևէ նոր տեսան չի յայտարարել, ուր կարողանայ դիմել իր քաղաքացին՝ ասօրեայ շահերն ու իրաւունքները պաշտպանելու համար։ Այս հանգամանքը աղբէր է ծառայում լրտեսութեան անօրինակ զարգացմանը։ Տեղական ոստիկանութիւնը, որ կատարում է միաժամանակ դատաստանական բոլոր ֆունկցիաները, ամբողջութեամբ հիմնւած է լրտեսութեան վրայ, որոնց մէջ մասնակցութիւն ունին, դժբախտաբար, նաև մարդիկ։ Եւ դա հասկանալի է։ Ժամանակակից հասարակական յարաբերութիւնների ընթացքում շատ դիրքեր գրւած է՝ անհատական ընդհարումներն ու փոխադարձ անբաւականութիւնները։ Ամեն մի չբաւարարած վիրաւորանք ու ամեն մի անպարտական մեղադրանք թէկուզ մեր բաւականութիւն՝ ընդունակ է պատճառ դառնալ յաճախ մեծամեծ չարիքների... Եւ վարչական ամենավատթար սիստեմը—լրտեսութիւնը—դուք վերակենդանացած կարող էք գտնել մեր երկրի մէջ։

Մի անուղ տոիթ, մի պատահական թիւրիմացութիւն բաւական է, որ